ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Ա.ՅԱՐԵՆԱՆՑ

ԳԼԽՈՆ

ԱՌԱՆՑԱՆՑ

ԱՍՏԻՃ

ԱՍՏԻՃ

6

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ՄԱՆԿԱՆՑ

ՓԱՐԻԶ

I
15204



Paris. — Imprimerie de P.-A. BOURDIER et Cie, rue Mazarine, 30.

ԱՌ ԱԶՆԻՒ

ՅՈՒԼԻԱՆԻԿ ՄԱԶԵՐՈՎԵԱՆ

ԸՆԹԱՑ

ԱԶՆԻՒ ՅՈՒԼԻԱՆԻՆ,

Երբոր ասկից երեք ամիս յառաջ եկայ Թէոդոսիա՝ քու սիրելի Մօրեղբայրդ եւ իմ հոգեւոր ծնողս Գերապատիւ Գաբրիէլ Վարդապետը տեսնելու եւ երկաժեայ կաբասս իրմէն առնելու, տեսայ եւ գրեց, փոքրիկ անձիդ վերայ փայլեցուցած մանկական գեղեցիկ առաքինութեանցդ զարմացայ եւ սիրեցի զանոնք. մաքուր Հայերէն աշխարհաբառ խօսակցութիւնդ գովեցի, եւ փափաքեցայ քեզ զուարճալի Ընծայ մը տալ՝ որ բարեգնաց ճամբուդ մէջ յարատեւելու եւ է՛ւս խրախուսէ զքեզ:

Փարիզ որ վերադարձայ, շատ մտածեցի թէ ի՞նչ կարող եմ դրկել որ աւելի հաճոյ

լինի քեզ եւ միանգամայն օգտակար. եւ այս Պատկերազարդ խաղալիկը գտայ, որով ոչ միայն դուն խաղալով զուարճանալով՝ ա՛յնպէս գեղեցիկ խօսած մայրենի լեզուիդ կարդալն եւս սովրիս դիւրութեամբ, այլ եւ քու պատճառաւ նաեւ բոլոր հասակակից համազգիքդ, որով եւ կարողանայք ԱՅԲԲԵՆԱՐԱՆԷՆ յետոյ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻՆ համն եւս առնուլ, եւ մէջի օգտաւէտ զուարճալեօքն զբօսնուլ եւ հրաճանգիլ:

Ընդունէ ուրեմն, ազնիւ ՑՈՒԼԻԱՆԻԿ, այս գրկած նորատեսակ՝ բայց քեզ ցանկալի եւ սիրելի խաղալիկս, եւ ստէպ ստէպ հետը խաղալով զուարճացիր:

ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ.

Փարիզ, 12 Մարտ 1860.

ԳԼՈՒ Ա.

Եբկաթագիր.

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը

Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ

Ձ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո

Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր

Ց Ւ Փ Քֆ Օ Ֆ

ԳԼԽ Բ.

Բոլորգիր.

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ

ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ

ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք օ ֆ

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ

ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ

ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք օ ֆ

Նոտար.

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ

ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ

ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք օ ֆ

ԴԱՍ Գ.

Եբկաթագիր եւ Բոլորգիր եւ անուանքը.

Ա ա.	Բ բ.	Գ գ.	Դ դ.	Ե ե.	Զ զ.	Է է.
այբ	բէն	գիմ	դա	եչ	զա	է
Ը ը.	Թ թ.	Ժ ժ.	Ի ի.	Լ լ.	Խ խ.	Ծ ծ.
ըթ	թո	ժէ	ինի	լիւն	խէ	ծա
Կ կ.	Հ հ.	Ձ ձ.	Ղ ղ.	Ճ ճ.	Մ մ.	Յ յ.
կէն	հո	ձա	ղատ	ճէ	մէն	յի
Ն ն.	Շ շ.	Ո ո.	Չ չ.	Պ պ.	Ջ ջ.	Ռ ռ.
նու	շա	ո	չա	պէ	ջէ	ռա
Ս ս.	Վ վ.	Տ տ.	Ր ր.	Ց ց.	Ւ ւ.	Փ փ.
սէ	վեվ	տիւն	րէ	ցո	ւիւն	փիւր
Քէ քէ.	Օ օ.	Ֆ ֆ.				

ԴԱՍ Դ.

Զարդարուն երկաթագիր.





ԴԱՍ Ե.

Ձայնաւորք եւ Բաղաձայնք.

Երկու տեսակ տառ կայ, Ձայնաւորք եւ Բաղաձայնք:

Ձայնաւորներն են

ա, ե, է, ը, ի, ո, օ.

Ասոնք անոր համար Ձայնաւոր կոչին, որովհետեւ ինքնիրենն՝ առանց ուրիշ տառի օգնութեան ձայն կիտանեն:

Բաղաձայններն են

բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, Ֆ.

Ասոնք անոր համար Բաղաձայն կոչին, որովհետեւ առանց քովերնին ձայնաւոր մը դնելու չեն հնչուիր, այսինքն ձայներնին չեկլեր, անուններին չարտասանուիր:

Իսկ ւ գիրը կէս բաղաձայն է, կէս ձայնաւոր:

ԴԱՍ Զ.

Պարզ վանկեր.

Բաղաձայներով եւ Ձայնաւորներով.

բա	բե	բէ	բը	բի	բո	բօ
գա	գե	գէ	գը	գի	գո	գօ
դա	դե	դէ	դը	դի	դո	դօ
զա	զե	զէ	զը	զի	զո	զօ
թա	թե	թէ	թը	թի	թո	թօ
ժա	ժե	ժէ	ժը	ժի	ժո	ժօ
լա	լե	լէ	լը	լի	լո	լօ
խա	խե	խէ	խը	խի	խո	խօ
ծա	ծե	ծէ	ծը	ծի	ծո	ծօ
կա	կե	կէ	կը	կի	կո	կօ
հա	հե	հէ	հը	հի	հո	հօ
ձա	ձե	ձէ	ձը	ձի	ձո	ձօ
ղա	ղե	ղէ	ղը	ղի	ղո	ղօ
ճա	ճե	ճէ	ճը	ճի	ճո	ճօ
մա	մե	մէ	մը	մի	մո	մօ

յա	յե	յէ	յը	յի	յո	յօ
նա	նե	նէ	նը	նի	նո	նօ
շա	շե	շէ	շը	շի	շո	շօ
չա	չե	չէ	չը	չի	չո	չօ
պա	պե	պէ	պը	պի	պո	պօ
ջա	ջե	ջէ	ջը	ջի	ջո	ջօ
ռա	ռե	ռէ	ռը	ռի	ռո	ռօ
սա	սե	սէ	սը	սի	սո	սօ
վա	վե	վէ	վը	վի	վո	վօ
տա	տե	տէ	տը	տի	տո	տօ
բա	բե	բէ	բը	բի	բո	բօ
ցա	ցե	ցէ	ցը	ցի	ցո	ցօ
ւա	ւե	ւէ	ւը	ւի	ւո	ւօ
փա	փե	փէ	փը	փի	փո	փօ
քա	քե	քէ	քը	քի	քո	քօ
ֆա	ֆե	ֆէ	ֆը	ֆի	ֆո	ֆօ

ԴԱՍ Է.

Պարզ վանկեր.

Զայնաւորներով եւ Բաղաձայներով.

աբ	եբ	էբ	ըբ	իբ	ոբ	օբ
ագ	եգ	էգ	ըգ	իգ	ոգ	օգ
ադ	եդ	էդ	ըդ	իդ	ոդ	օդ
ազ	եզ	էզ	ըզ	իզ	ոզ	օզ
աթ	եթ	էթ	ըթ	իթ	ոթ	օթ
աժ	եժ	էժ	ըժ	իժ	ոժ	օժ
ալ	ել	էլ	ըլ	իլ	ոլ	օլ
ախ	եխ	էխ	ըխ	իխ	ոխ	օխ
աճ	եճ	էճ	ըճ	իճ	ոճ	օճ
ակ	եկ	էկ	ըկ	իկ	ոկ	օկ
ահ	եհ	էհ	ըհ	իհ	ոհ	օհ
ան	են	էն	ըն	ին	ոն	օն
աղ	եղ	էղ	ըղ	իղ	ող	օղ
աշ	եշ	էշ	ըշ	իշ	ոշ	օշ
աչ	եչ	էչ	ըչ	իչ	ոչ	օչ
այ	ել	էյ	ըյ	իյ	ոյ	օյ

ան	են	էն	ըն	ին	ոն	օն
աշ	եշ	էշ	ըշ	իշ	ոշ	օշ
աչ	եչ	էչ	ըչ	իչ	ոչ	օչ
ապ	եպ	էպ	ըպ	իպ	ոպ	օպ
աջ	եջ	էջ	ըջ	իջ	ոջ	օջ
առ	երռ	էռ	ըռ	իռ	ոռ	օռ
աս	ես	էս	ըս	իս	ոս	օս
ավ	եվ	էվ	ըվ	իվ	ովվ	օվ
ատ	ետ	էտ	ըտ	իտ	ոտ	օտ
աբ	եբ	էբ	ըբ	իբ	ոբ	օբ
աց	եց	էց	ըց	ից	ոց	օց
աւ	եւ	էւ	ըւ	իւ	ոււ	օւ
ափ	եփ	էփ	ըփ	իփ	ոփ	օփ
աք	էք	էք	ըք	իք	ոք	օք
աֆ	եֆ	էֆ	ըֆ	իֆ	ոֆ	օֆ

ԴԱՍ Բ.

Միավանկ սովորական Բառեր.

Տուն.

Մառ.

Ձեռք.



Էշ.

Գիրք.

15004

Պտուղ.

Աչք.

Եուն.



Կառք.

Սուրբ Խաչ.

[illegible]



Ձի.



Ուղտ.

Բու.

Սագ.



Տղայք.



Դորտ.

Վրան.

Զէնք եւ Զրահ.

Բոյն.

Կով ու եզ.

Ձուկ.



Արջ.



Փիղ.

Մարդ, Դլուխ.

Ժայռ.

Թագ.



Օձ ուշիժ.

Ծով եւ Ջուր.



Նաւ.

Այծ.

Գայլ.

Կեանք.



Պսակ.

Մուկ.



Որթ.

ԳԱՍ Թ.

Երկավանկ Բառեր.

Ցի-սուս, Ցիսուս.

Հրեշ-տակ, Հրեշտակ.

Կրի-ա, Կրիա.



Ոչ-խար, Ոչխար.



Ա-կանջ.
Ականջ.



Մե-ղու,
Մեղու.

Տա-ւիղ,
Տաւիղ.



Քա-ղաք, Քաղաք.

Դա-ւիթ, Դաւիթ.

Հո-վիւ, Հովիւ.

Ա-բեւ, Արեւ.

եր-կինք, երկինք.

Աշ-խարհ, Աշխարհ.

Ագ-ռաւ, Ագռաւ.



Նա-ւակ. Նաւակ.



Ճա-ճար, Տաճար.

Ջր-հոր, Ջրհոր.



Խա-ղող. Խաղող. Ող-կոյզ, Ողկոյզ.

ձա-գար, ձագար.

Կա-պիկ, Կապիկ.

Վի-շապ, Վիշապ.

Մով-սէս, Մովսէս.

Շա-տատ, Շատատ.

Ար - ծիւ, Արծիւ.

Թռ - չուն, Թռչուն.

Այ - ծեամ, Այծեամ.

Մար - կոս, Մարկոս.

Ղու - կաս, Ղուկաս.

ԴԱՍ Ժ.

Եռավանկ Բառեր.

Ա-ղաւ-նի,
Աղաւնի.



Թի-թեռ-նիկ,
Թիթեռնիկ.



Ընձ-ա-ուիծ, Ընձառիւծ.



Ան-կո-ղին,
Անկողին.



Տա-պա-նակ,
Տապանակ.

Ա - ռա - քեալք.
Առաքեալք.

Փայ - տա - հար.
Փայտահար.

Զի - ա - ւոր. Զիաւոր.

Ա - հա - րոն. Ահարոն.

Դա - նի - էլ. Դանիէլ.

Կեն - դա - նիք, Կենդանիք.



Փա - գա - ւոր,
Փագաւոր.

Սա - տա - նայ,
Սատանայ.

Եր - կրա - գործ, Երկրագործ.

ԴԱՍ ԺԱ.

Բառավանկ եւ հնգավանկ բառեր.

Ար - դա - ր - ութիւն,
Արդարութիւն.

Ո - ղոր - մութ - իւն,
Ողորմութիւն.

Սե - դա - նա - ւոր,
Սեղանաւոր.

Սեր - մա - նա - ցան,
Սերմանացան.

Ե-կե-ղե-ցի, Ա-ստուած-սի-ր-ու-թիւն,
եկեղեցի. Աստուածսիրութիւն.

Որ-դե-սի-ր-ու-թիւն, Որդեսիրութիւն.

ԴԱՍ ԺԲ.

Միավանկ բառեր.

Հայր	Մայր	Քոյր	Թոռն
Իմ	Քու	Ձեր	Մեր
Հաց	Ջուր	Հուր	Օդ
Ձեռք	Ոտք	Քիթ	Գլուխ
Աչք	Այտ	Թեւ	Մատ
Խաղ	Երգ	Պար	Տանձ
Դիրք	Թուղթ	Գրիչ	Գիր
Ամպ	Լոյս	Ճրագ	Դուռ

ԴԱՍ ԺԳ.

Երկավանկ բառեր.

Հայ-րիկ	Մայ-րիկ	Քու-րիկ	Դա-տրիկ
Ի-մին	Ձե-րին	Մե-րին	Ա-նոր
Ա-կռայ	Ե-բես	Մար-մին	Ա-կանջ
Ցեա-նալ	Խա-ղալ	Ին-տալ	Մի-ճաղ
Սի-բել	Սի-բուն	Ազ-նիւ	Ձամ-բայ
Նա-քար	Եր-գել	Ին-ձոր	Սա-լոր
Ցով-սէփ	Ցա-կոր	Ներ-սէս	Ան-տոն
Քա-լել	Եր-թալ	Դառ-նալ	Ջար-նել

ԴԱՍ ԺԴ.

Եռավանկ բառեր.

Հօր-եղ-բայր	Մօր-եղ-բայր	Քեռ-որ-դի
Մի-ծա-դիլ	Ցատ-քը-տել	Փա-փա-քիլ
Սի-բե-լի	Գե-ղե-ցիկ	Սի-բու-նիկ
Գա-տու-հան	Վա-բա-գոյր	Ա-պա-կի
Խա-ղա-լիք	Խա-ղա-ցող	Խա-բե-բայ
Կե-բա-կուր	Գտ-ղե-ղէն	Խմ-բե-ղէն

ԴԱՍ ԺԵ.

Քառավանկ եւ Հնգավանկ բառեր.

Ու-բա-խա-նալ	Ու-բա-խու-թիւն
Ճա-քա-բե-ղէն	Ա-նու-շե-ղէն
Ջու-ար-ճա-նալ	Ջու-ար-ճու-թիւն
Եղ-բայր-սի-բու-թիւն	Հո-գե-սի-բու-թիւն
Ա-ռա-քի-նու-թիւն	Ազ-գա-սի-բու-թիւն
Ա-ռա-քի-նի	Վար-ձա-հա-տոյց
Թա-գա-ւո-բու-թիւն	Ար-քա-յու-թիւն
Աս-տուա-ծա-մայր	Աս-տուա-ծա-ծին

ԴԱՍ ԺԶ.

Խառն բազմավանկ բառեր.

Աշ-խա-տանք	Աշխատանք
ձա-ռա-գայթ	ձառագայթ
Բա-բե-բաբ	Բաբեբաբ
Բա-բե-բա-բու-թիւն	Բաբեբաբութիւն
Բա-բե-գործ	Բաբեգործ
Բա-բե-գոր-ծու-թիւն	Բաբեգործութիւն
Ա-ղեկ-ու-թիւն	Աղեկութիւն
Ջաբ-ու-թիւն	Ջաբութիւն
Սբ-բու-թիւն	Սրբութիւն
Բա-բե-կա-մու-թիւն	Բաբեկամութիւն
Բա-բե-կամ	Բաբեկամ
Որ-դե-սի-բու-թիւն	Որդեսիրութիւն
Որ-դե-սէր	Որդեսէր
Մնո-ղա-սի-բու-թիւն	Մնողասիրութիւն
Մնո-ղա-սէր	Մնողասէր
Եղ-բայ-բա-սէր	Եղբայրասէր

ԴԱՍ ԺԷ.

Խառն բազմավանկ բառեր.

Հայ-բա-սէր	Հայրասէր
Հայ-բա-սի-բու-թիւն	Հայրասիրութիւն
Մայ-բա-սէր	Մայրասէր
Մայ-բա-սի-բու-թիւն	Մայրասիրութիւն
Ան-տուա-ծա-սէր	Անտուաճասէր
Ազ-գա-սէր	Ազգասէր
Ազ-գա-սի-բու-թիւն	Ազգասիրութիւն
Հայ-բե-նա-սէր	Հայրենասէր
Ընկե-բա-սէր	Ընկերասէր
Ընկեր-սի-բու-թիւն	Ընկերսիրութիւն
ձշ-մար-տա-սէր	ձշմարտասէր
ձշ-մար-տա-խօս	ձշմարտախօս
Սր-բու-հի	Սրբուհի
Թա-գու-հի	Թագուհի
Վար-դու-հի	Վարդուհի

ԴԱՍ ԺԸ.

Նախակրթական ընթերցմունք.

Գեղեցիկ խնձոր: — Հաժեղ տանձ: — Անոյշ դեղձ (շէֆթալի): — Խոշոր սալոր: — Գալ ամիս: — Եկող տարի: — Ձերմակ ձեռնոց: — Բարակ մէջք: — Զուարճալի խաղ: — Օգտակար գիրք: — Մեծ տուն, լայն սրահ: — Մայրական սէր: — Որդիական սէր: — Բարի մարդ: Ազնիւ զաւակ: — Առաքինի անձ: — Երկայն հասակ: — Անախորժ ձայն: — Ախորժելի ձայն: — Անոյշ ձայն: — Ցգեղ երես: — Գեղեցիկ դէմք: — Ազնիւ բնութիւն: — Բարի սիրտ: — Հին կօշիկ: — Նոր կօշիկ: — Կարկատած կօշիկ: — Գեղեցիկ օդ: — Ամպոտ օդ: — Անձրեւոտ օդ: — Ցաք օդ: — Խղդուկ օդ:

ԴԱՍ ԺԹ.

Կարճ իմաստներ.

Աստուած մի է, ամէն բան կտեսնէ, ամէն բան կլսէ, ամէն բան գիտէ, եւ ամէն տեղէ:

Աստուած ստեղծած է այս մեր բնակած աշխարհս մէջի բոլոր բաներով:

Աստուած ստեղծած է նաեւ զմարդ:

Աստուած մարդուս բարի գործքը կվարձատրէ թէ՝ այս աշխարհիս վրայ եւ թէ արքայութեան մէջ:

Աստուած մարդուս չար գործքը կպատժէ թէ՝ այս աշխարհիս վրայ եւ թէ անդիի աշխարհ՝ դժոխքի մէջ:

Առաքինի անձինք միայն կերթան արքայութիւն:

Չար ու ախտամոլ մարդիկ դժոխք կերթան ու հոն կայրին անշէջ կրակով:

Հոս հնազանդ տղայք թէ՝ Աստուծոյ սիրելի լինին եւ թէ ծնողաց:

ԳԼԽ Ի.

Զուանախաղ.

Զարուհի՛, եկուր մէջ ալ Մաքրիկին հետ զուան խաղանք. երէկ հայրս ամուր ու մեծ զուան մը բերաւ ինձ, ճայրերն ալ գեղեցիկ կարմիր փայտէ կոթեր ունի. շուտ ըրէ երթանք խաղանք. բայց զուանին ճայրերը դուն Մաքրիկին հետ պիտի բռնես որ նախ ես ցատքեմ վրան, վասնզի գիտէք որ զուանն իմս է, ուստի կվայլէ որ գէթ նախիս խաղամ:

ԴԱՍ ԻԱ.

Պար.

Եայեցէք սա տղաք պար կո՛ւգան. եկէք մեք ալ պարենք. բաւական հոգի կանք. շատոնց է չպարեցինք. բայց պարագլուխ ո՞վ պիտի լինի. Թող Միհրան լինի. մէջերնիս ամենէն բարձր ծնկուբներ ու երկայն թեւեր ունեցողն ինքն է. ուրեմն իրեն կիյնայ այս պաշտօնը, մանաւանդ որ քրոջմէն լաւ պարել ու կաքաւել սովրած է:

ԴԱՍ ԻԲ.

Ռուսուժնասէր Անտոնիկ.

այէ հայրիկ, առաւօտ եղաւ. բարի լոյս, մայրիկ. այսօր ի՞նչպէս էք, լա՞ւ էք:

Այս օր խելօք պիտի կենամ, նոյնպէս նաեւ վաղը, որպէս զի գիս շատ սիրէք:

Այս առաւօտ օդը շատ գեղեցիկ է:

Երէկ շատ ամպոտ էր:

Ալ սկսայ համարձակ կարդալ, եւ կարդալով կզուարճանամ: Ի՞նչ ուրախութիւն:

Բաց ի կիրակիէ՝ ամէն օր Այբբենարանիս փոքրիկ դասերէն մէկը պիտի սովրիմ, որպէսզի երիկունները սիրելի ծնողաց զրուցելով՝ զիրենք ուրախացընեմ: Հայրս գիս եղբօրմէս աւելի կսիրէ, վասնզի ես քան զնա լաւ կսովրիմ դասերս եւ զինքն անցայ:

ԳԼԱՍ ԻԳ.

Փուքաջան Մարիամիկ.

Հազելի մայր իմ, երէկ շաբթուան օրերուն անունները սովրեցայ. կեցիր ասեմ որ տեսնես.

Երկուշաբթի, երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի, Ուրբաթ, Շաբաթ, Կիրակի:

Տես, մայրիկ, ինչպէս երեկուան դասս լաւ գիտեմ:

Այսօր ալ մինչեւ տասը հաշուել սովրեցայ.

Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը, տասը:

Բայց տարուան ամիսներուն անուններն ալ գիտեմ.

Յունուար, Փետրուար, Մարտ, Ապրիլ, Մայիս, Յունիս, Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր:

ԴԱՍ ԻԴ.

Առաւօտեան Աղօթք.

Առաւօտն արթննալուդ պէս, սիրելի աղջիկս Անանիկ, երեսդ խաչակնքէ՝ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, եւ գրուցէ «Առաուած իմ, շնորհիր տուր ինձ որ այսօր խելօք կենամ ու մեղք չգործեմ:»

Հագուելուդ պէս՝ ծունր դիր, եւ ասա «Հայրմեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք

քո՝ որպէս յերկինս եւ յերկրի : Զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր, Թող մեզ զպարտիս մեր՝ որպէս եւ մեք Թողումք մերոց պարտապանաց, եւ մի՝ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէ. զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք, յաւիտեանս ամէն : »

Այսպիսի հոգեւոր պատրաստութեամբ որ օրդ կսկսիս, անշուշտ եղիր, սիրելի զաւակս Անդիկ, որ Աստուծոյ շնորհքը հետդ կըլլայ, եւ Աստուծոյ եւ մարդկան սիրելի լինիս եւ հաճոյ :

ԴԱՍ ԻԵ.

Իելացի Վ.արդուհի.

Այս այբբենարանս շա՛տ շա՛տ կսիրեմ, ասէր Վ.արդուհի, մէջը աղուո՛ր սիրո՛ւն պատկերներ կան. դասերն ալ պզտիկ են եւ զուարճալի, դիւրաւ կհասկընամ զանոնք, առանց նեղուելու եւ առանց ձանձրանալու կսովրիմ, երիկունները ծնողացս կզրուցեմ, վրաս կուրախանան եւ ինձ շաքար կուտան:

Այսօր պտրտելու պիտի երթամք. շուտով հագուիմ պատրաստուիմ, որպէսզի ուրիշները չսպասեցընեմ, վասնզի մայրս ասաց որ ուրիշը սպասեցընել տալը շատ վատ բան է եղեր:

ԳԼՈՒԽ ԻԶ.

Կարճ խմաստներ.

Իրուն վարդը ծաղկանց Թագուհին է:

Առիծուը կենդանեաց Թագաւորն է:

Արծիւը Թռչնոց Թագաւորն է:

Ոսկին քան զամէն մետաղ ազնիւ ու Թանկագին է. սակաւագիւտ է նաեւ քան զամէն մետաղ եւ կարծր:

Ամէն փայլած բանն ոսկի չէ:

Մարդ ոչ երբէք պէտք է ուրիշը խաբէ. միշտ պէտք է ճշմարիտը զրուցէ, եւ խօսքին հաւատարիմ կենայ կատարէ զայն:

Ոչ երբէք պէտք է մարդս յուսահատի, վասնզի յուսահատութիւնը տկարամտութեան նշան է:

Բարի անունն ու համբաւը աւելի լաւ է քան Թէ մեծափարթամ հարստութիւն:

ԳԼԽ ԻԷ.

Փամփշտախաղ.

Եղ կրսեմ Դառնիկ, նայէ սա տղայք որպիսի՛ ուրախութեամբ փամփուշտ կխաղան. ինչպէս ամէնքն ալ ձեռքերնին ու թեւերնին բացած պատրաստած՝ փամփշտին ետեւէն կվազեն կվազվռտեն որ բռնելուն պէս՝ ուժով մը վեր նետեն: երանի՛ թէ մեք եւս այն փամփուշտէն մէկ հատ ունենայինք ու գետին զարնելով

եւ վեր ցատքեցընելով խաղայինք զուարճանայինք :

Ես այս երիկուն հօրս պիտի աղաչեմ որ ինձ հատ մը վաղը գնէ, եւ անոր փոխարէն պիտի խոստանամ որ կարդալուս ուշադրութիւն ընեմ ու սէր ձգեմ, եւ մօրս խօսքէն դուրս չելլեմ :

Թէ որ տղայք գիտնային թէ հլութիւնն եւ ուսումնասիրութիւնը իրենց ո՛րչափ բարիք ու խաղալիք կրերեն՝ միշտ հլու հնազանդ եւ ուսումնասէր կըլլային, եւ անով նաեւ շատ ու շատ պատիժներէ ու ծանր եւ անախորժ խօսքեր լսելէն ազատ կըլլային :

ԳԼԽ ԻԸ.

Իսկուհի Տիկին եւ իւր խրատները.

Եզ կըսեմ, Ներսէս, մտիկ ըրէ ըսածիս.

Իսկուհի տիկինը զարմանալի եւ սիրելի եղած էր ամենուն խելքովն ու գիտութեամբը. այս խրատները կուտար ասէլ իւր որդեկին:

» Ինչ որ չես ուզեր որ ուրիշներն քեզ ընեն՝ դու եւս նոցա մ'ըներ:

» Չլսած՝ պատասխան մի՛ տար:

» Խեղճերու ողորմէ: Մեռելը մեծարէ:

» Բարիք մը ոչ երբէք կկորսուի:

» Մուլութիւնը մայր է թշուառութեան:

» Միշտ մտածէ որ Աստուծոյ առջեւն ես, եւ թէ նորա աչքէն բան չփախչիր:

» Առանց առաքինութեան՝ ճշմարիտ երջանկութիւն չկայ:

» Ժամանակդ մի՛ կորանցուներ, վասնզի անգին է :

» Բարի զաւակ եղիր, լաւ ու ազնիւ սիրտ ունեցիր :

» Երբէք բերնէդ սուտ մի՛ հաներ՝ եթէ կուզես որ մարդիկ խօսքիդ հաւատան :

» Աղջկան մը գեղեցկագոյն զարդն է պարզութիւնն ու պարկեշտութիւնը :

» Տղու մը լրբութիւնը՝ զինքն ամենուն ատելի կընէ :

» Տղայք ամենուն սիրելի լինելու համար պէտք է որ բաղաքավար ու մարդավար լինին :

» Անօթութիւնն ու աշխատանքը զամէն կերակուր կհամովցուցնեն :

» Ո՛վ որ կարծէ թէ ամէն բան գիտէ՝ բան չգիտեր :

» Լաւ գիրք մը լաւ բարեկամ մի է :

» Ընկերդ՝ իբրեւ քու անձդ սիրէ :

» Չարեաց փոխարէն՝ բարիս հատո : »

ԴԱՍ ԻԹ.

Խաղ.

Սիրելի մանկունք, ոչ երբէք պէտք է ձեր ծնողաց կամ վարժապետաց արգելած խաղը խաղաք: Երբոր կարգելուն որ խաղ մը չխաղաք՝ անոր համար չէ որ ձեր ուզածը չընեն, հապա որպէսզի ձեզ անկէց վնաս մը չգայ:

Խաղի մէջ մի՛ բարկանաք, խաբէութիւն մ՚ընէք, խաղակցաց հետ սիրով վարուեցէք, քաղցրութեամբ խօսեցէք: Նատ մի՛ պառաք մի՛ կանչէք:



ԴԱՍ Լ.

Ոչխար.

Ենթիկ աղուորիկ ոչխար մը ունէր ու շատ կսիրէր զայն :

Երբէք չէի կարծեր, ըսաւ, որ այս հագած գեղեցիկ շրջազգեստս (Ֆիստան) ոչխարիս նման ոչխարներու բրդովը շինուած էր. եւ սակայն մայրս երէկ ինձ զբուցեց, եւ հասկըցուց թէ ինչպէս նաեւ ուրիշ շատ գեղեցիկ բաներ կշինուին եղեր ոչխարի բրդով :

Առաջ ալ ոչխարս շատ կսիրէի. բայց այսուհետեւ աւելի եւս պիտի սիրեմ, որովհետեւ այսպիսի օգտակար կենդանի է եղեր :

ԴԱՍ ԼԱ.

Անօթութիւնն ու աշխատանքը զամէն կերակուր կհամովցուցնեն.

Պուրնիս համ չունի ասէր Յովսեփիկ՝ դգալը մէկդի դնելով, ալ չեմ ուզեր :

— Ուրիշ մը շինելու ժամանակ չունիմ, պատասխանեց մայրը, բայց այս երիկուն աւելի համով ապուր մը՝ քեզ կկերցունեմ :

Կերակրէն ետքը Յովսեփիկն առաւ պարտէզ իջաւ եւ մինչեւ երիկուն վնասակար խոտերն հետը անոր փրցունել տուաւ :

Երեկոյեան կերակրի ժամանակ վեր եկան, մայրը կէսօրուան ապուրը սեղան բերաւ, եւ Յովսեփիկ համն առաջին պէս «Ահա

ապուր ա՛յսպէս լինի, ի՞նչ համեղ ապուր» ասելով քանի մը սկաւառակ կերաւ :

Ցայնժամ մայրն ասաց նմա. «Որդեակ իմ, կէսօրուան ապուրն է. եւ որովհետեւ աշխատեցար եւ անօթեցար, անոր համար քեզ համով կերեւայ :

«Ուրեմն պզտիկուց միտքդ դիր, Ցովսեփիկ, որ անօթութիւնն ու աշխատանքն՝ ամէն կերակուր կհամովցունեն. աշխատանքը դարձեալ՝ քուն եւ առողջութիւն կուտայ :»

ԳԼՈՒ ԼԲ.

Կերակուր.

Սեղանի վրայ հանդարտ կեցիր Տիգրան. կերակուրդ մաքուր կեր, նայէ որ ո՛չ վրադ եւ ոչ սեղանի փուռցին վրայ ջուր, գինի կամ ո՛ր եւ իցէ բան թափես: Մեծերուն խօսած ժամանակը՝

դուն մի՛ խօսիր. խօսքերնին կտրելով՝ բան մ՚ուզեր իրենցմէ: Սովրէ ամէն տուաջնին ուտելու. այս կամ այն կտորէն կուզեմ մ՚ասեր. կշտացած ժամանակդ՝ որկրամոլութեամբ աւելի չուտես: Պատառաքաղը (չաթալ) կամ դգալը (գաշըգ) սկաւառակին (թաղագ) զարնելով ձայներ չհանես. բերանիդ պատառը այնպէս խոշոր չլինի որ թուշերդ ուռին. բերանդ եղածը չկլլած՝ նոր չդնես: Ջուր կամ գինի չխմած՝ եւ խմելէն յետոյ բերանդ սրբէ, եւ խմելու ժամանակ ձայներ մի՛ հաներ: Աթոռիդ հետ մի՛ խաղար, թեւերդ սեղանի վրայ մի՛ կռթնցրներ. բարձրաձայն մի՛ ծիծաղիր:

ԴԱՍ ԼԴ.

Զանասէր Գրիգորիկ.

Երէկ մեր վարժապետը դպրատան առաջին դասարանի աշակերտաց Թուաբանութիւն սկսել տալով կըսէր որ, մէկէն մինչեւ ինը գրելու համար աւելի դիւրինէ Թուանշան կոչուած գրերը գործածել. եւ սեւ տախտակի մը վրայ այսպէս զանոնք կգրէր

1	2	3	4	5
մէկ	երկու	երեք	չորս	հինգ
6	7	8	9	
վեց	եօթը	ութը	ինը	

Խոշոր 0 մըն ալ կգրէր ու զրոյ կանուանէր զայն, եւ ասէր որ վերի ինը Թուանշանաց որո՛ւն աջ դին որ դրուի այն Թուանշանը՝ տասն անգամ կմեծնայ. ուստի 1ին աջ դին դրուելով՝ մէկը՝ տասը լինի եղեր. 2ը՝ քսան. 3ը՝ երեսուն. 4ը՝ քառասուն. 5ը՝ յիսուն. 6ը՝ վաթսուն. 7ը՝ եօթանասուն. 8ը՝ ութսուն. 9ը՝ իննսուն. զոր օրինակ

10	20	30	40	50
տասը	քսան	երեսուն	քառասուն	յիսուն
60	70	80	90	
վաթսուն	եօթանասուն	ութսուն	ինսուն	

եւ այսպէս այս տասը թուանշանով՝ ամէն թիւ, ամէն համրանք ասոնց պէս կգրուի եղեր: Ա՛հ, ե՞րբ արդեօք ես ալ աշակերտակցացս չափ կարդալուս մէջ յառաջ պիտի երթամ՝ որ վարժապետն ինձ եւս թուաբանութիւն սկսել տայ:

Գրիգորիկին ուսումնասէր հայրը Տ. Մըկրտիչ զարմացաւ որ ի՞նչպէս իւր եօթնամեայ որդին ընկերացը դասը մէկ անգամ լսելուն՝ այսպէս կարգաւորեալ միտքը պահեր եւ իրեն ալ կհասկցընէր. ուրախութենէն գրկեց համբուրեց իւր ուշիմ որդին, եւ գլուխը բացաւ փառք տուաւ Աստուծոյ որ իրեն այսպիսի ազնիւ զաւակ շնորհեր է:



ԴԱՍ ԼԴ.

Ուսումնասիրութիւն.

Տիրանի՛կ, երբոր մայրդ կամ վարժապետդ կարդալու համար գրեզ կանչեն՝ իսկոյն խաղդ թող, եւ վազէ գնա առանց երեսդ թթուեցընելու:

Գիտցիր, սիրելի զաւակս, որ դաս մը լաւ եւ շուտով սովրելու համար պէտք է ամենայն կերպով անոր ուշադրութիւն դնել: Նա որ չուզելով կկարդայ՝ կձանձրանայ, եւ շատ անգամ՝ կէս ժամուան մէջ սովրելիք դասը՝ հազիւ կարող լինի ամբողջ օրուան մը մէջ սովրիլ:

Տես, ինչ մեծ ջանքով կաշխատին Առաքել ու Նունիա: Առաքելդ իմացը գլուխ մը դրած կօրինակէ, որպէսզի հօրը անուան տօնին օրն իրեն ընծայ տայ. քոյրը Նունիա եւս նոյն դիտաւորութեամբ գեղեցկանկար հողաթափ մը կբանի:

Ո՞վ գիտէ ո՞րչափ պիտի ուրախանայ ու գիրենք պիտի համբուրէ հայրերնին Տ. Մանուկ, եւ Աստուծոյ շնորհակալ պիտի լինի որ իրեն այսպիսի ծնողասէր զաւակներ պարգեւեր է: Անշուշտ ինքն ալ իրենց գեղեցիկ ընծաներ պիտի տայ:

Մանկունք, ամէնքնիդ ալ կարող էք եթէ կամիք, հայրասէր Առաքելին ու Նունիկին պէս ձեր ծնողքն ուրախացունել՝ եթէ ուսման եւ բարեկրթութեան սէր ձգէք:



ԴԱՍ ԼԵ.

Առիւծ.

Եկուր նայէ սա կատաղի առիւծին. կարծես թէ զմարդ ողջ ողջ կուզէ կլլել. հայրս առիւծի վրայ շատ բաներ պատմեց. ըսաւ նաեւ թէ կենդանեաց թագաւորն է: Տե՛ս, ի՞նչպէս կատաղի աչքով կնայի. գլխուն երկայն մազերն ալ ի՞նչպէս տնկուած են: Ո՛հ, ոչ երբէք կուզեմ այսպիսի ահաւոր կենդանւոյ ձեռք իյնալ:

ԳԼՈՒԽ Լ.

Շրջանակախաղ.

Շրջանակ դարձընել շատ կսիրեմ Վահան. ո՛ւր էր թէ ես ալ շրջանակ մը ունենայի եւ սա տղոց պէս խաղայի ու զուարճանայի :

Ինչ ասեմ, մինչեւ հիմա չունենալուս յանցանքն իմս է. եթէ քիչ մը դասերս լաւ նովրէի՝ մայրս շատոնց ինձ կգնէր :

Թէ որ քիչ մը սա ծուլութիւնս թողուի՝ գիտեմ որ ուրիշ շատ խաղալիք կունենայի :

ԴԱՍ ԷԷ.

Սոֆիկ եւ իւր տիկին մայրը.

Սոֆիկ Ռոֆիկ, սիրուն ու խելացի աղջիկ մի է. Թէպէտեւ տարիքը դեռ խիստ պզտիկ է, բայց եւ այնպէս՝ տանը մէջ ամենուն օրինակ եղած է հնազանդութեան : Առանց մօրը հրամանին՝ անկարելի է իրեն բան մը ընել տալ. շաբաթ անգամ տաս՝ չուտեր. գեղեցիկ խաղալիկ անգամ տաս՝ չառնուր, եւ կվազէ նախ մօրմէն հրաման կուզէ :

Այսպիսի հլու հնազանդ զաւակն ո՞վ չսի-

բեր. տիկին մայրն ալ երկու աչքին պէս զինքը կսիրէ, կպագնէ, վրան կգուրգուրայ, աղուոր աղուոր կհագցընէ, զուարճալի պարտէզներ կտանի կպտրտցընէ, եւ ամէն տեսած նիւթէն առիթ առնելով՝ իւր սիրելի աղջկան խելքն ու միտքը բանալու եւ զարդարելու բաներ կպատմէ, տեղեկութիւններ կուտայ : Ուստի եւ Սոֆիկին հետ խօսողը կկարծէ թէ չափահաս օրիորդի մը հետ կխօսի, ամէն ըրած հարցմունքին՝ որոշ ու խելացի պատասխաններ կառնու. կիմանայ թէ քանի՝ տարեկան ու քանի՝ ամսուան է. ո՞ւրչափ կարդալու սէր ունի, եւ թէ սիրելի մայրը խոստացած է որ լաւ կրթութիւն ու դաստիարակութիւն տայ իրեն, այսինքն բնութիւնը լաւ կրթելէն յետոյ՝ իրեն սովրեցընել տայ նաեւ կար ու գեղեցիկ ձեռագործներ, գրել կարդալ, լեզուներ ու գիտութիւններ, եւ անոյշ անոյշ դաշնակ զարնել ու երգել :

Սոֆիկը միայն հայրն ու մայրը չեն սիրեր, այլ եւ բոլոր ազգականները, բոլոր զինքը տեսնողները :

ԴԱՍ Լ.

Սոֆիկին իւր մօրը վրայ ունեցած սէրը.

Ինչ ազնիւ մայր ունիմ, ասէր Սոֆիկ իւր բարեկամուհւոյն. միշտ զիս կմտածէ, եւ մինչեւ որ զիս գոհ չտեսնէ՝ երջանիկ չլինիր :

Անդադար վրաս կհսկէ, եւ բոլոր ուրախութիւնն այն է որ զիս երջանիկ ընէ :

Երբոր հիւանդ լինիմ, աչուքներն արցունքով կլեցուին : Անկողնոյս քով զինքը կտեսնեմ դեղնած ու տխուր երեսով, եւ կերակուր ուտելն անգամ կմոռնայ : «Քաղցրի՛կ Յիսուս, ասէ ատէպ, դուն որ այնչափ կսիրես անմեղ տղայքը, գառնուկ զաւակս առողջացուր : »

Երբ յանցանք մը կգործեմ՝ մայրս կը-տրտմի, եւ շատ կտրտմի. բայց կմխիթարուի եւ երեսին տրտմութիւնը իսկոյն կփարատի երբոր յանցանքս ճանչնալով վրան կզղջամ, եւ գիրկը կիյնամ, իրմէ թողութիւն կխնդրեմ: Ցայնժամ սիրով զիս կգրկէ եւ Աստուծոյ կաղաչէ որ ինձ ներէ:

Ո՛վ Աստուած իմ, երկար կեանք պարգեւէ սիրելի մօրս, եւ շնորհք տուր ինձ որ խելօքութեամբս, հլութեամբս եւ ջանասիրութեամբս զինքը գոհ ու երջանիկ ընեմ:

ԳԼՈՒԽ Լ.

Սոֆիկին կենդանեաց վրայ ունեցած սէրը.

Պարտէզպանը տարեակ (գարա թավուգ) մը տեսնելով որ իւր ձագուցը կոցովը կեր-ցակուր կուտար, գնաց վարպետութեամբ մը ողջ բռնեց զայն, եւ բերաւ Սոֆիկին ընծայ տուաւ:

Սոֆիկ ուրախութեամբ առաւ պագաւ սարեակը, եւ վազեց որ մօրը ցուցնէ :

« Ա՜հ, մայրիկ, ասաց, տե՛ս գեղեցիկ սարեակս. լսէ՛ ի՞նչպէս ձիկ ձիկ կընէ :

— Խեղճ Թռչունը կուլայ, պատասխանեց մայրը :

— Կուլա՞յ. եւ ինչո՞ւ կուլայ :

— Դիտե՞ս, որդեակ, ինչո՞ւ : Վանդի քիչ մը առաջ իւր ձագերուն ուրախ զուարթ կերակուր կուտար, եւ զինքն անոնցմէ բաժնեցին :

— Եւ իւր ձագերն ի՞նչ պիտի լինին մայրիկ :

— Անոգուտ տեղ մայրերնին պիտի կանչեն. պիտի մտին, պիտի անօթենան, եւ պիտի մեռնին : »

Փափկասիրտ Սոֆիկին վարդագեղ դէմքը գոյնը նետեց, խոշոր սեւ աչուքներն արտասուօք թրջեցան, եւ ասաց.

« Ուրեմն, ա՛յնպէս են հիմա, այն խեղճ

Թռչնիկներն՝ ինչպէս լինէի ես երբ սիրելի մայրս ձեռքէս յափշտակէին առնուին :

— Այո՛, աղջիկս, եւ ի՞նչ կուզէիր որ այն ժամանակ քեզ ընէին :

— Կուզէի որ շուտով մայրս ինձ դարձուներին, եւ ամենաշո՛ւտ, ամենաշո՛ւտ : » Եւ զայս ասելով մօրը վիզը գնաց պլլուեցաւ, պտըլիկ սիրունիկ ձեռուրները բացաւ, սաբեակը Թռաւգնաց իւր բոյնը, եւ խեղճ ծաղունք մօրերնուն Թեւին տակ տաքցան ոգի առին, եւ սկսան ուրախ ուրախ երգել ու ճճուել :

Եւ ազնուասիրտ Սոֆիկ երջանիկ էր, վասնզի բարի գործ մը ընելը կիմանար :

ԳԼԽ Ի.

Երեկոյեան Աղօթք.

Որդեակ իմ սիրելի. ահա օրն անցաւ, անցան նաեւ օրուան մէջ ունեցած զուարճութիւններդ ու խաղերդ. երիկունն եղաւ, կերակուր կերար կշտացար, ճանգչեցար. արդ ժամանակ է որ քնանաս, մարմինդ ու միտքդ ալ ճանգչեցունես:

Անկողին չմտած՝ ծնկի վրայ եկ եւ երե-

կոյեան աղօթքդ ըրէ : Թէոր օրուանդ մէջ անհնազանդութիւն կամ ուրիշ անպատշաճ բան մը ըրիր՝ վրան ցաւէ, ընելուդ վրայ զղջա, եւ Աստուծոյ խօսք տուր մէյ մը ալ նոյն պակասութեան մէջ չիյնալու :

Ճնորհակալ եղիր Աստուծոյ որ զքեզ այն վայրկենին ողջ առողջ հասուց, եւ խնդրէ իրմէ որ պահապան հրեշտակդ յուղարկէ որ գայ գիշերուան քնոյդ մէջ վրադ հսկէ, ու ամէն փորձանքէ զքեզ ազատ պահէ, որպէսզի առաւօտը նորէն աչքդ իլոյս բանալուդ պէս՝ իւր սուրբ անունն օրհնես ու փառաբանես :

Paris. — Imprimerie de F.-A. Bourdier, 30, rue Mazarine.